

ՀՀ ԲՆԱՀՈՂԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՀՈՂԱՏԻՊԵՐԸ
ԸՍՏ WRB ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Ղազարյան Հ.Ղ., Կրոյան Ս.Զ.

ՀԱԱՀ Հ. Պետրոսյանի անվ. Հողագիտության ազգային կենտրոնի և մելիորացիայի
գիտական կենտրոն մ/ճ, Երևան, e-mail: ghazaryan_soil@yahoo.com, kroyan.samvel
@mail.ru.

Ներածություն

Կլիմայի համամոլորակային փոփոխությունը արդեն իսկ մեր երկրի կայուն զարգացման կարևորագույն խնդիրներից է դարձել: Այժմ արդիական է դարձել կլիմայի փոփոխության, հողերի անապատացման ազդեցության գնահատումը գյուղատնտեսության, բնահողային գոտիների վրա և այդ փոփոխություններին դիմակայելու համար ծրագրերի մշակումը:

1998թ Մոնպելեում որոշում է ընդունվել ամբողջ աշխարհում ստեղծել հողային ռեսուրսների միասնական կառավարման բազա՝ World Reference Base for Soil Resources (WRB), որի ժամանակ պետք է հաշվի առնել հողառաջացնող մայրատեսակների ծագումը, կազմը, կլիմայական պայմանները, հողային հատկությունները, տնտեսական գործունեության տարբեր ոլորտներում հողերի օգտագործման հնարավորությունները, բնապահպանական սահմանափակումները և այլն [5]:

Նյութը և օբյեկտը

Հետազոտության նյութ է ծառայել կլիմայի փոփոխության և անապատացման պայմաններում ՀՀ-ում առկա բոլոր հողատիպերում տեղի ունեցող փոփոխությունները, հողերի դասակարգումն ու անվանումների համապատասխանեցումը միջազգային WRB համակարգի չափանիշներին հաշվի առնելով նաև Դոկուչևյան դասակարգման սկզբունքները: Հետազոտության օբյեկտ է հանդիսացել հանրապետության հողային ծածկոցը:

Արդյունքների քննարկում

Հանդիսանալով չորային և ցամաքային կլիմայական պայմաններով լեռնային երկիր, Հայաստանը ամբողջ տարածքով խոցելի է համամոլորակային կլիմայական փոփոխությունների նկատմամբ: Վերջին տասնամյակների ընթացքում հանրապետությունում դիտվել է ջերմաստիճանի զգալի աճ՝ 1935-2012թթ. ընթացքում տարեկան միջին ջերմաստիճանն աճել է 1,03°C-ով: 2011թ. հուլիսի 31-ին Մեղրիում գրանցվել է դիտարկումների ամբողջ ժամանակահատվածի համար Հայաստանի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ 43,7°C, որը 0,7°C-ով գերազանցել է նախկինում դիտվածը: Վերջին հարյուրամյակում Հայաստանում էքստրեմալ շոգ ամառներ դիտվել են վերջին 20 տարիների ընթացքում [2, 3]:

Տեղումների քանակի փոփոխության գնահատականների համեմատությունը ցույց է տալիս, որ դրանց նվազման միտումը շարունակվում է: 1935-2012թթ ընթացքում դիտվել է տարեկան տեղումների միջին քանակի մոտ 10%-ի նվազում [3]:

Այսօր հասարակությանը սպառնող մեծագույն վտանգներից մեկը տարածքների հողերի անապատացումն ու դեգրադացիան է, պայմանավորված կլիմայի փոփոխության և մարդու տնտեսական գործունեության համատեղ ազդեցությամբ: Վերջին տվյալներով հանրապետության տարածքի 81,9%-ը կամ 24353 կմ² ենթարկված է տարբեր աստիճանի անապատացման, որը ունի արագացման միտում [2, 3, 4]:

Այժմ հանրապետության հողային ծածկույթի դեգրադացիան, անապատացումը դրսևորվում է այնպիսի նեգատիվ երևույթների առկայությամբ և դրանց զարգացման միտումներով, ինչպիսին են հողերում հումուսի /օրգանական ածխածնի/ և օրգանական նյութերի պարունակության նվազումը, էրոզիոն երևույթների զարգացումը, ստրուկտուրայի փոշիացումը, ջրակայուն ագրեգատների քանակի կրճատումը, կլանող կոմպլեքսում Ca-ի պարունակության նվազումը, ծավալային կշռի ավելացումը, ընդհանուր ծակոտկենության նվազումը և այլն: Հարկ է նշել, որ հողերի դեգրադացիան և անապատացման պրոցեսը ակտիվ դրսևորումներով են հանդես գալիս հատկապես ցածրադիր և միջին բարձրության լեռնային գոտիներում: Բարձր լեռնային գոտում անապատացման երևույթները աստիճանաբար թուլանում են հասնելով նվազագույնի լեռնամարգագետնային գոտում: Սակայն այստեղ նույնպես հանդիպում են հողատարածքներ, որոնք որոշակի բացասական փոփոխությունների են ենթարկվել: Դրանք այն տարածքներն են, որոնք մոտ են գտնվում համայնքներին, որտեղ վաղ զարնանային գերարածեցումների պատճառով զգալի հողատարածքներ ենթարկվել են դեգրադացման:

Հանրապետության տարածքի վերընթաց գոտիականության լանդշաֆտա-էկոլոգիական շարքերի կլիմայական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ այստեղ ևս նկատվում է քսերոֆիտացման միտում: Ըստ բարձրության բնական էկոհամակարգերում կանխատեսվում է լանդշաֆտային գոտիների սահմանների նկատելի տեղափոխություն դեպի վեր:

Համաձայն Հ.Ղ. Ղազարյանի տվյալների (Ղազարյան Հ.Ղ. և ուրիշներ, 2014) հանրապետության բնահողային գոտիներում արդեն իսկ նկատելի է գոտիների դեպի վեր տեղաշարժը: 1985-2013թթ ժամանակահատվածում, բացառությամբ անտառային գոտու մնացած բոլոր գոտիները տեղաշարժվել են վերև շուրջ 50մ-ով:

Սակայն այժմ մասնագիտական գրականության մեջ այս հարցի վերաբերյալ հանդիպում են նաև այլ տվյալներ, համաձայն որի հանրապետության բնահողային գոտիները տեղաշարժվել են դեպի վեր 200-300մ, իսկ որոշ տվյալներով նույնիսկ 400մ: Տեղումների կրճատման և ջերմաստիճանի բարձրացման հետևանքով մոտակա 100 տարիների ընթացքում սպասվում է կլիմայական գոտիների շեղում 200-250մ դեպի վեր [6]:

Վերլուծելով կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով բուսածածկի, հողածածկի, կլիմայական պայմանների կանխատեսվող փոփոխությունները՝ պարզվել է, որ Հայաստանի այժմյան լանդշաֆտների զբաղեցրած տարածքներում առաջիկա տասնամյակներում կունենան արիդացման միտում, որի հետևանքով դրանց տեղաշարժ դեպի վեր շարունակվելու է [4]:

Հանրապետության տարածքի ֆիզիկաաշխարհագրական բարդ պայմանները նպաստել են նաև խայտաբղետ հողային ծածկույթի ձևավորմանը: ՀՀ տարածքում առանձնացվել է հողերի 14 գենետիկական տիպեր: Այժմ արդեն անհրաժեշտություն է առաջացել կատարել հողերի նոր դասակարգում այն համապատասխանեցնելով

միջազգային չափորոշիչներին: Ստորև տրվում է ՀՀ հողատիպերի նոր դասակարգումն ու անվանանակարգումը ըստ միջազգային WRB համակարգի:

Antrhosols – Ոռոզելի մարգագետնային գորշ, , Գետահովտադարավանդային, մելիորացված աղուտ-ալկալի հողերին տրվել է Anthrosols անվանումը հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրանց առաջացման գործում բավականին մեծ է մարդու ազդեցությունը: Այնքանով, որ հիշյալ հողերը գյուղատնտեսական արտադրության մեջ օգտագործվում են վաղընջական ժամանակներից, այդ իսկ պատճառով կարծում ենք, որ այնհամապատասխանում է միջազգային դասակարգման Antrosols ռեֆերատիվ հողային խմբին (PIT), որը համարժեք է Դոկուչանյան հողատիպ տաքսոնոմիական միավորմանը:

Solonetz-Solonchaks - Հիդրոմորֆ աղուտ-ալկալի հողեր, Պալեոհիդրոմորֆ կապակցված ալկալիացած հողեր: Հիդրոմորֆ աղուտ-ալկալի և պալեոհիդրոմորֆ կապակցված ալկալիացած հողերը ձևավորվել են Արարատյան հարթավայրում: Այս հողերի ընդհանուր տարածությունը կազմում է շուրջ 43 հազ. հա: Ըստ միջազգային դասակարգման սանդղակի նշված հողերը համապատասխանում են Solonetz-Solonchaks անվամբ ռեֆերատիվ հողախմբին:

Calcisols-Կիսաանապատային գորշ հողեր, լատիներեն calx– կիր բառից - Կիսաանապատային գորշ հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ, ուստի հաշվի առնելով նշված հանգամանքը նշված հողերը առանձնացվել են որպես, Calcisols, որը միանգամայն համապատասխանում է միջազգային դասակարգման սանդղակին:

Kastanozems - Շագանակագույն հողեր լատինական castanea -շագանակ և ռուսական зем- հող բառերից: Լեռնային շագանակագույն հողերը ձևավորվել են համեմատաբար չորային կլիմայական պայմաններում և համապատասխանում են միջազգային Kastanozems անվանմանը:

Chernozems - Լեռնային սևահողեր, Մարգագետնասևահողային հողեր: Սևահողերը բնութագրվում են օրգանական նյութերի բարձր պարունակությամբ և կլանող կոմպլեքսի հզեցվածությամբ, ինչը համապատասխանում է միջազգային դասակարգման Chernozems անվանմանը: Մարգագետնասևահողային հողերը ձևավորվել են սևահողերի տարածման շրջանում, գրունտային խոնավացման պայմաններում, որոնք գրեթե բոլոր հատկանիշներով շատ նման են սևահողերին, այդ պատճառով էլ դրանք ևս անվանակոչվում են Chernozems:

Regosols – Սևանա լճի ջրերից ազատված հողագրունտներ հունարեն peroc – վերմակ, ծածկոց բառից, ինչը նշանակում է փոխըր զանգված, որը ծածկում է կարծր և ամուր սպարաշերտերը: Հիշյալ հողերի վերանվանումը Regosols and rock outcrops համապատասխանում է դասակարգման միջազգային չափանիշներին:

Cambisols - Անտառային դարչնագույն, Անտառային ճմակաբբոնատային, Անտառային գորշ հողեր: Լատիներեն cambier փոխել բառից: Անտառային գոտու բոլոր երեք հիմնական հողատիպերը համապատասխանում են Cambisols անվանմանը [7]:

Phaeozems-Մարգագետնատափաստանային հողեր: Հունարեն φαῖος- մուգ և ռուսական зем- հող բառերից, որը արտացոլում է հողի սև գույնը և օրգանական նյութերի բարձր պարունակությունը: Կլիման չափավոր ցուրտ է և չափավոր խոնավ: Նման պայմաններում ձևավորված հողերը միանգամայն համապատասխանում են Phaeozems միջազգային անվանակոչմանը:

Umbrisols - Լեռնամարգագետնային հողեր: Լատիներեն umbra- ստվեր բառից: Այս հողերը բնութագրվում են հումուսի և օրգանական նյութերի բարձր պարունակությամբ: Հաշվի առնելով նշված հանգամանքը լեռնամարգագետնային հողերը նպատակահարմար է ընդգրկել Umbrisols ռեֆերատիվ խմբում:

Եզրակացություններ

1. ՀՀ տարածքում առկա են կլիմայի փոփոխության դրսևորումները, որոնք արտահայտվում են օդի միջին տարեկան ջերմաստիճանի բարձրացմամբ, տեղումների տարեկան քանակի նվազմամբ, գոլորշիացման ուժեղացմամբ:
2. Կլիմայի փոփոխության և մարդու ոչ հաշվենկատ տնտեսական գործունեության արդյունքում հանրապետության տարածքում առկա են հողերի դեգրադացման և տարածքների անապատացման տարբեր դրսևորումներ:
3. Հայաստանում նկատելի են լանդշաֆտային և բնահողային գոտիների տեղաշարժ դեպի վեր:
4. Միջազգային WRB համակարգի կիրառմամբ հանրապետության հողերի նոր դասակարգման և անվանակոչման արդյունքում նախկին 14 հողատիպերը խմբավորվել են 9 ռեֆերատիվ հողային խմբերում (РПГ):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիր: Երևան 2002, էջ 85-121:
2. Խոյեցյան Ա.Վ., Մկրտչյան Ռ.Ս. Անապատացման պատճառահետևանքային կապերը և տարածաժամանակային գնահատման սկզբունքները Հայաստանի Հանրապետությունում: Երևան, 2006, 230 էջ:
3. Կլիմայի փոփոխության մասին երրորդ ազգային հաղորդագրությունը ըստ կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի- Երևան, 2015, 191 էջ:
4. Հայաստանի Հանրապետության Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա: Հինգերորդ ազգային զեկույց, Երևան 2014, էջ 38:
5. Таргульян В.О., Герасимова М.И. Мировая коррелятивная база почвенных ресурсов: основа для международной классификации и корреляции почв., Москва, 2007, 280 с.
6. Ghazaryan H.G., Mkrtchyan A.L., Petrosyan G.G. Climate changes and soil degradation in Armenia. Annals of Agrarian sciens, Tbilisi, Georgia, vol.12, 2014. - P. 42-46.
7. Urushadze T., Blumb W., Kvrivishvilia T. Classification of soils on sediments, sedimentary and andesitic rocks in Georgia by the WRB system //Annals of Agrarian Science. – 2016. – Vol. 14, Issue 4. – P. 351–355.

CHANGES OF RA LAND AREAS IN DESERT ADVANCING CONDITIONS AND TYPES
OF SOILS ACCORDING TO WRB INDICATORS

Ghazaryan H.Gh., Kroyan S.Z.

Branch of National Agrarian University of Armenia, Scientific Center of Soil Sciences,
Agrochemistry and Melioration after H.P. Petrosyan, Republic of Armenia, Yerevan,
e-mail: ghazaryan_soil@yahoo.com., kroyan.samvel@mail.ru.

Annotation

In the article desertation due to global climate changes, landscape and earth movements upward due to economic activities of humans and main issues of leveling and labeling are discussed. All kinds of genetic earth have been classified by the indicators presented in World Reference Base for Soil Resources (WRB).